ԶԵԿՈՒՅՑ

«ՄԵԿ ԵՐԵԽԱ - ՄԵԿ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Մեկ երեխա – մեկ համակարգիչ» ծրագրի (Ծրագիր) մոնիտորինգի շրջանակում երկու տարիների ընթացքում գրանցված ձեռքբերումներն ու առկա դժվարությունները բացահայտելու համար հարցման են ենթարկվել Վայոց Ձորի մարզի հանրակրթական դպրոցների 2-րդ և 3-րդ դասարանների սովորողների 1188 ծնողներ:

Նպատակ էր դրվել հարցման միջոցով պարզել.

- գրասալիկի կիրառման ազդեցությունը սովորողների ուսումնառության վրա,
- ՏՀՏ-ների կիրառման վերաբերյալ ծնողի տեղեկացվածության մակարդակը,
- գրասալիկի կիրառության հաճախականությունը,
- գրասալիկի տեխնիկական սպասարկման և կիրառման ընթացքը,
- գրասալիկի կիրառության նկատմամբ ծնողի վերաբերմունքը:

ԳՐԱՍԱԼԻԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սովորողների ուսումնառության վրա գրասալիկների կիրառման արդյունավետությունը գնահատելու նպատակով ընտրվել են նպատակային և ստուգիչ հարցեր (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ուսումնառության վրա գրասալիկի կիրառության ազդեցության գնահատման հարցերի դասակարգումը

Նպատակային հարց	*Ստուգիչ հարցեր*
Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին. ▪ **այո** ▪ **ոչ** ▪ **մասամբ:**	*Անհանգստություն ունե՞ք, որ Ձեր երեխան գրասալիկ օգտագործելու պատճառով կթերանա ուսման մեջ.* ▪ չեմ կարծում, ▪ երբեմն մտածել եմ այդ ուղղությամբ, ▪ համոզված եմ
	Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ. ▪ այո, նկատել եմ ոգևորվածություն ▪ նա միշտ էլ ոգևորված է եղել դասերով ▪ երբեմն նկատում եմ

Հարցման ենթարկված 1188 ծնողների 41.1%-ը գտնում է, որ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է ուսումնական առաջընթացին, 39.7%-ը դրանում մասամբ է համոզված, իսկ 19.2%-ը համաձայն չէ (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. « Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին» հարցի պատասխանների բաշխումը, %

Ստուգիչ հարց 1. *Անհանգստություն ունե՞ք, որ Ձեր երեխան գրասալիկ օգտագործելու պատճառով կթերանա ուսման մեջ.*

- չեմ կարծում,
- երբեմն մտածել եմ այդ ուղղությամբ,
- համոզված եմ:



Գծապատկեր 2. «Անհանգստություն ունե՞ք, որ Ձեր երեխան գրասալիկ օգտագործելու պատճառով կթերանա ուսման մեջ» հարցի պատասխանների բաշխումը, %

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցման ենթարկված ծնողների 53.0%-ը չի կարծում, որ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է երեխայի ուսումնական առաջընթացին, համոզված է միայն 14.6%-ը:

Աղյուսակ 2. «Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին» և «Անհանգստություն ունե՞ք, որ Ձեր երեխան գրասալիկ օգտագործելու պատճառով կթերանա ուսման մեջ» հարցերի պատասխանների համադրման արդյունքները

Նպատակային հարց *«Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին…»*	Ստուգիչ հարց *«Անհանգստություն ունե՞ք, որ Ձեր երեխան գրասալիկ օգտագործելու պատճառով կթերանա ուսման մեջ...»*			Ընդամենը
	Չեմ կարծում	Երբեմն մտածել եմ այդ ուղղությամբ	Համոզված եմ	
Այո	344	118	26	**488**
Ոչ	77	58	93	**228**
Մասամբ	209	209	54	**472**
Ընդամենը	**630**	**385**	**173**	**1188**

Ուսումնական առաջընթացին ՏՀՏ-ների նպաստելուն կողմ 488 ծնողների 70.5%-ը չի կարծում, որ ՏՀՏ-ների պատճառով երեխան կթերանա ուսման մեջ, իսկ ուսման գործընթացում ՏՀՏ-ների նպաստելուն մասամբ համոզված 472 ծնողների 44.2-ական %-ը չի կարծում, մյուս մասը երբեմն համոզված է, որ ՏՀՏ-ների պատճառով երեխան կթերանա ուսման մեջ:

Այս երկու հարցերի պատասխանների միջև կապը միջին է:

Եզրակացություն 1: Ծնողների այն հիմնական մասը, ովքեր նշում են, որ ՏՀՏ-ների պատճառով երեխան չի թերանա ուսման գործընթացից, նրանք ինչ-որ չափով համոզված են, որ ուսումնական առաջընթացին ՏՀՏ-ները նպաստում են:

Ստուգիչ հարց 2. *Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ.*

- Այո, նկատել եմ ոգևորվածություն:
- Նա միշտ էլ ոգևորված է եղել դասերով:
- Երբեմն նկատում եմ:

Հարցման ենթարկված ծնողների գրեթե կեսը՝ 46.5%-ը, նշել է, որ անկախ դպրոցում ՏՀՏ-ների կիրառելուց, իրենց երեխան միշտ ոգևորված է: Կարելի է կարծել, որ նրանք էական տարբերություն չեն նկատում ՏՀՏ-ների կիրառության հետ կապված, կամ էլ հավատում են իրենց երեխայի ունակություններին (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3. «Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ..» հարցի պատասխանների բաշխումը, %

Աղյուսակ 3. «Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին» և «Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ» հարցերի պատասխանների համադրման արդյունքները

Նպատակային հարց *«Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին»*	Ստուգիչ հարց *«Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ»*			Ընդամենը
	Այո, նկատել եմ ոգևորվա-ծություն	Նա միշտ էլ ոգևորված է եղել դասերով	Երբեմն նկատում եմ	
Այո	200	209	79	**488**
Ոչ	25	114	89	**228**
Մասամբ	96	230	146	**472**
Ընդամենը	**321**	**553**	**314**	**1188**

Աղյուսակ 3-ում բերված տվյալներից երևում է, որ ուսումնական առաջընթացին ՏՀՏ-ների նպաստելու մեջ համոզված 488 ծնողների 42.8%-ը իր երեխայի ոգևորվածության մեջ չի տեսնում ՏՀՏ-ների կիրառության ազդեցությունը, իսկ 40.9%-ը տեսնում է: Ուսումնական առաջընթացում ՏՀՏ-ների դերը չկարևորող 228 ծնողների ուղիղ կեսը նույնպես երեխայի ոգևորվածության մեջ չի տեսնում ՏՀՏ-ների կիրառության ազդեցությունը:

Այս դեպքում նպատակային և ստուգիչ հարցերի պատասխանների միջև ձևավորվել է ուժեղ կապ:

Եզրակացություն 2: Ծնողների հիմնական մասը ուսումնական գործընթացում երեխաների ոգևորվածությունը չի կապում ՏՀՏ-ների կիրառության հետ, չնայած՝ դրանց մի մասը համոզված է սովորողների ուսումնական առաջընթացին ՏՀՏ-ների նպաստելուն:

ՏՀՏ-ՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՆՈՂԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Պարզելու համար, թե որքանով է ծնողը ներգրավված Ծրագրին և որքանով է տեղեկացված, ընտրվել են նպատակային և ստուգիչ հարցեր (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման վերաբերյալ ծնողի տեղեկացվածության մակարդակի գնահատման հարցերի դասակարգումը

Նպատակային հարց	*Ստուգիչ հարցեր*
Դուք գիտե՞ք՝ ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը • **Այո, ինձ բացատրել է ուսուցիչը:** • **Այո, ինձ դրա մասին ասել է իմ երեխան:** • **Ենթադրում եմ:** • **Չգիտեմ:**	Երեխան Ձեզ ցույց տալի՞ս է, թե դպրոցում ինչ է արել գրասալիկով. • Համարյա միշտ: • Երբեմն: • Երբեք:
	Ուսուցիչը երբևէ դժգոհե՞լ է Ձեր երեխայից՝ գրասալիկի կիրառության հետ կապված. • Այո: • Երբեմն: • Երբեք:
	Երբևէ ուսուցչից ճշտե՞լ եք տանը գրասալիկով առաջադրանքներ կատարելու կամ ունենալու մասին. • Մեկ-երկու անգամ: • Երբեմն: • Չեմ հիշում:

Գծապատկեր 4-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ծնողների գերակշիռ մասը՝ 74.8%-ը, գիտի, թե ինչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը: Նրանք տեղեկացվել են ուսուցչից:



Գծապակեր 4. «Դուք գիտե՞ք՝ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը» հարցի պատասխանների բաշխումը, %

Ստուգիչ հարց 1. *Երեխան Ձեզ ցույց տալի՞ս է, թե դպրոցում ինչ է արել գրասալիկով.*

- Համարյա միշտ:
- Երբեմն:
- Երբեք:



Գծապատկեր 5. «Երեխան Ձեզ ցույց տալի՞ս է, թե դպրոցում ինչ է արել գրասալիկով» հարցի պատասխանների բաշխումը, %

Ծնողների գրեթե կեսը՝ 48.2%-ը, նշել է, որ համարյա միշտ, իսկ 42.8%-ը՝ երբեմն, երեխան իրենց ցույց է տալիս դպրոցում գրասալիկով կատարած աշխատանքը:

Ներկայացնենք նպատակային և ստուգիչ հարցերի պատասխանների համադրումների արդյունքները (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. «Դուք գիտե՞ք՝ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը» և «Երեխան Ձեզ ցույց տալի՞ս է, թե դպրոցում ինչ է արել գրասալիկով..» հարցերի պատասխանների համադրումները

Ստուգիչ հարց	Նպատակային հարց *«Դուք գիտե՞ք՝ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը»*				Ընդամենը
«Երեխան Ձեզ ցույց տալի՞ս է, թե դպրոցում ինչ է արել գրասալիկով»	Այո, ինձ բացատրել է ուսուցիչը	Այո, ինձ դրա մասին ասել է իմ երեխան	Ենթադրում եմ	Չգիտեմ	
Համարյա միշտ	491	42	33	7	**573**
Երբեմն	385	42	51	31	**509**
Երբեք	55	11	15	25	**106**
Ընդամենը	**931**	**95**	**99**	**63**	**1188**

Աղյուսակ 5-ում բերված տվյալներից երևում է, որ դպրոցում գրասալիկի կիրառության մասին ուսուցչից տեղեկացված 931 ծնողների 51.7%-ը, նշում է, որ իր երեխան համարյա միշտ, իսկ 41.3%-ը՝ երբեմն, ցույց է տալիս, թե դպրոցում ինչ են արել գրասալիկով:

Այս դեպքում պատասխանների միջև կապը թույլ է: Ծնողների 21.6%-ը նշել է, որ գրասալիկի կիրառման նպատակի մասին տեղեկացվել են երեխաներից, ենթադրում է նպատակի մասին կամ չգիտեն այն, այնուհանդերձ, ծնողների այս մասը նշում է, որ համարյա միշտ կամ երբեմն իրենց երեխաները ներկայացնում են, թե ինչ են արել գրասալիկով դպրոցում:

Ստուգիչ հարց 2. *Ուսուցիչը երբևէ դժգոհե՞լ է Ձեր երեխայից՝գրասալիկի կիրառության հետ կապված.*

- Այո:
- Երբեմն:
- Երբեք:

Ծնողների 78.1%-ը նշել է, որ երբեք ուսուցիչը չի դժգոհել իրենց երեխայից գրասալիկի կիրառության հետ կապված, 17.3%-ը նշել է, որ երբեմն եղել են դժգոհություններ (Գծապատկեր 6):



Գծապատկեր 6. «Ուսուցիչը երբևէ դժգոհե՞լ է Ձեր երեխայից՝ գրասալիկի կիրառության հետ կապված» հարցի պատասխանների բաշխումը, %

Աղյուսակ 6. «Դուք գիտե՞ք՝ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը» և «Երեխան Ձեզ ցույց տալի՞ս է, թե դպրոցում ինչ է արել գրասալիկով» հարցերի պատասխանների համադրումները

Ստուգիչ հարց	Նպատակային հարց *«Դուք գիտե՞ք՝ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը»*				Ընդամենը
«Ուսուցիչը երբևէ դժգոհե՞լ է Ձեր երեխայից՝ գրա-սալիկի կիրառության հետ կապված»	Այո, ինձ բացատրել է ուսուցիչը	Այո, ինձ դրա մասին ասել է իմ երեխան	Ենթադրում եմ	Չգիտեմ	
Այո	33	8	6	7	**54**
Երբեմն	158	18	20	10	**206**
Երբեք	740	69	73	46	**928**
Ընդամենը	**931**	**95**	**99**	**63**	**1188**

Աղյուսակ 6-ում բերված տվյալներից երևում է, որ դպրոցում գրասալիկի կիրառության մասին ուսուցչից տեղեկացված 931 ծնողների 16.9%-ը, նշում է, որ

ուսուցիչը երբեմն դժգոհել է երեխայից գրասալիկի կիրառության հետ կապված, իսկ 79.4%-ը նշել է, որ երբեք դժգոհություններ չեն եղել:

Վերլուծությունը ցույց է տվել, որ այս հարցերի պատասխանների միջև կապը գործնականում բացակայում է: Ստացված պատասխանների միջև օրինաչափություն չի ձևավորվել:

Ստուգիչ հարց 3. *Երբևէ ուսուցչից ճշտե՞լ եք տանը գրասալիկով առաջադրանքներ կատարելու կամ ունենալու մասին.*

- Մեկ-երկու անգամ,
- Երբեմն,
- Չեմ հիշում:

Գծապատկեր 7-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ծնողների 48.7%-ը նշել է, որ երբեմն ուսուցչից ճշտել է տանը գրասալիկով առաջադրանքներ կատարելու մասին, 29.3%-ը հազվադեպ է ճշտել:



Գծապատկեր 7. «Երբևէ ուսուցչից ճշտե՞լ եք տանը գրասալիկով առաջադրանքներ կատարելու կամ ունենալու մասին» հարցի պատասխանների բաշխումը, %

Աղյուսակ 7. «Դուք գիտե՞ք՝ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը» և «Երբևէ ուսուցչից ճշտե՞լ եք տանը գրասալիկով առաջադրանքներ կատարելու կամ ունենալու մասին» հարցերի պատասխանների համադրումները

Ստուգիչ հարց	Նպատակային հարց *«Դուք գիտե՞ք՝ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը»*				Ընդամենը
«Երբևէ ուսուցչից ճշտե՞լ եք տանը գրասալիկով առաջադրանքներ կատարելու կամ ունենալու մասին»	Այո, ինձ բացատրել է ուսուցիչը	Այո, ինձ դրա մասին ասել է իմ երեխան	Ենթադրում եմ	Չգիտեմ	
Մեկ-երկու անգամ	277	30	23	18	**348**
Երբեմն	467	38	49	24	**578**
Չեմ հիշում	187	27	27	21	**262**
Ընդամենը	**931**	**95**	**99**	**63**	**1188**

Աղյուսակ 7-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցում գրասալիկի կիրառության մասին ուսուցչից տեղեկացված 931 ծնողների 50.1%-ը, նշում է, որ ուսուցչից երբեմն ճշտել է տանը գրասալիկով առաջադրանքներ կատարելու մասին, 29.7%-ը հազվադեպ է ճշտել ուսուցչից այդ մասին:

Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ պատասխանների միջև կապը թույլ է: Այս հարցերի դեպքում ևս չի նկատվում միմյանցով պայմանավորված օրինաչափություն:

ԳՐԱՍԱԼԻԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրասալիկի կիրառության հաճախականությունը գնահատելու նպատակով ընտրվել են հետևյալ նպատակային ր ստուգիչ հարցերը (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Գրասալիկի կիրառության հաճախականության գնահատման հարցերի դասակարգումը

Նպատակային հարց	*Ստուգիչ հարց*
Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում. • Գրեթե ամեն օր: • Շաբաթը երկու անգամ: • Երբ անհրաժեշտ է:	*Կա՞ պատճառ, որ երեխան պարբերաբար դպրոց չի տանում գրասալիկը.* • Այո: • Երբեմն: • Ոչ:
	Հարմա՞ր է արդյոք գրասալիկը ամեն օր դպրոց տանելը. • Այո: • Ոչ:

Գծապատկեր 8-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ծնողների կեսից ավելին՝ 63.3%-ը, նշում է, որ երեխան գրասալիկը դպրոց տանում է անհրաժեշտության դեպքում, 19.8% և 16.9%-ը նշում է համապատասխանաբար՝ շաբաթը երկու անգամ և գրեթե ամեն օր:



Գծապատկեր 8. «Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում» հարցի պատասխանների բաշխումը, %

Ստուգիչ հարց 1. *Կա՞ պատճառ, որ երեխան պարբերաբար դպրոց չի տանում գրասալիկը.*

- Այո:
- Երբեմն:
- Ոչ:



Գծապատկեր 9. «Կա՞ պատճառ, որ երեխան պարբերաբար դպրոց չի տանում գրասալիկը» հարցի պատասխանների բաշխումը, %

Հարցման ենթարկված ծնողների 58.4%-ը նշում է, որ չկա որևէ պատճառ, որ երեխան գրասալիկը դպրոց չի տանում, 25.1%-ը՝ նշել է՝ այո, պատճառ կա (Գծապատկեր 9):

Աղյուսակ 9. «Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում» և «Կա՞ պատճառ, որ երեխան պարբերաբար դպրոց չի տանում գրասալիկը» հարցերի պատասխանների համադրումները

Նպատակային հարց *«Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում»*	Ստուգիչ հարց *«Կա՞ պատճառ, որ երեխան պարբերաբար դպրոց չի տանում գրասալիկը.»*			Ընդամենը
	Այո	Երբեմն	Ոչ	
Գրեթե ամեն օր	40	45	116	**201**
Շաբաթը երկու անգամ	53	45	137	**235**
Երբ անհրաժեշտ է	205	106	441	**752**
Ընդամենը	**298**	**196**	**694**	**1188**

Աղյուսակ 9-ում բերված տվյալների համաձայն՝ ծնողների 58.4%-ը նշում է, որ չկա որևէ պատճառ գրասալիկը դպրոց չտանելու համար, և նրանց հիմնական մասը՝ 63.5%-ը նշել է, որ երեխան գրասալիկը դպրոց է տարել անհրաժեշտության դեպքում:

Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ նպատակային և ստուգիչ հարցերի պատասխանների միջև կապը շատ թույլ է: Ստացված պատասխանները միմյանցով հիմնավորված չեն:

Եզրակացություն 1. Անկախ գրասալիկը դպրոց պարբերաբար չտանելու պատճառների առկայությունից՝ ըստ ծնողների՝ երեխաները հիմնականում գրասալիկը դպրոց տարել են անհրաժեշտության դեպքում:

Ստուգիչ հարց 2. *Հարմա՞ր է արդյոք գրասալիկը ամեն օր դպրոց տանելը.*

- Այո:
- Ոչ:

Ինչպես երևում է գծապատկեր 10-ում ներկայացված տվյալներից, ծնողների գերակշիռ մասը՝ 82.4%-ը, գտնում է, որ գրասալիկը դպրոց տանելը հարմար չէ:



Գծապատկեր 10. «Հարմա՞ր է արդյոք գրասալիկը ամեն օր դպրոց տանելը» հարցի պատասխանների բաշխումը, %

Աղյուսակ 10. «Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում» և «Հարմա՞ր է արդյոք գրասալիկը ամեն օր դպրոց տանելը» հարցերի պատասխանների համադրումների արդյունքները

Նպատակային հարց *»Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում»*	Ստուգիչ հարց *«Հարմա՞ր է արդյոք գրասալիկը ամեն օր դպրոց տանելը»*		Ընդամենը
	Այո	Ոչ	
Գրեթե ամեն օր	75	126	**201**
Շաբաթը երկու անգամ	32	203	**235**
Երբ անհրաժեշտ է	102	650	**752**
Ընդամենը	**209**	**979**	**1188**

Աղյուսակ 10-ում ներկայացված տվյալներից երևում է, որ գրասալիկը ամեն օր դպրոց տանելը անհարմար համարող 979 ծնողների 66.8%-ը նշում է, որ երեխան գրասալիկը դպրոց է տանում անհրաժեշտության դեպքում, իսկ 20.7%-ը նշում է, որ երեխան շաբաթը երկու անգամ է գրասալիկը դպրոց տանում:

Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ այս հարցերի պատասխանների միջև կապը շատ ուժեղ է: Պատասխանների միջև նկատելի է ձևավորված օրինաչափություն:

Եզրակացություն 2: Ծնողների գերակշիռ մասը գտնում է, որ գրասալիկը դպրոց տանելն անհարմար է, և երեխան գրասալիկը դպրոց է տանում անհրաժեշտության դեպքում:

ԳՐԱՍԱԼԻԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Գրաալիկի տեխնիկական սպասարկման և կիրառման գնահատում իրականացնելու համար ընտրվել են հետևյալ հարցերը (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Գրասալիկի տեխնիկական և կիրառման գնահատման հարցերի դասակարգումը

Նպատակային հարց	*Ստուգիչ հարց*
Տանը գրասալիկը կիրառելիս նկատել եք՝ • **տեխնիկական խնդիրներ,** • **երեխայի դժվարությունը,** • **երեխայի կողմից տնային առաջադրանքների ավելի արագ կատարում:**	*Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ.* • Այո, նկատել եմ ոգևորվածություն: • Նա միշտ էլ ոգևորված է եղել դասերով: • Երբեմն նկատում եմ:

Արդյունքներից երևում է, որ ծնողների հիմնական մասը՝49.7%-ը, նշում է գրասալիկի կիրառության դեպքում տեխնիկական խնիրների առկայություն մասին, 34.1%-ը նշում է երեխայի կողմից տնային առաջադրանքների արագ կատարման մասին (Գծապատկեր 11):



Գծապատկեր 11. «Տանը գրասալիկը կիրառելիս նկատել եք» հարցի պատասխանների բաշխումը, %

Ստուգիչ հարց 1. *Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ.*

- Այո, նկատել եմ ոգևորվածություն:
- Նա միշտ էլ ոգևորված է եղել դասերով:
- Երբեմն նկատում եմ:

Ներկայացնենք նպատակային և ստուգիչ հարցերի պատասխանների համընկնումները (Աղյուսակ 12):

Աղյուսակ 12. 7«Տանը գրասալիկը կիրառելիս նկատել եք» և «Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ» հարցերի պատասխանների զուգորդումները

Նպատակային հարց «*Տանը գրասալիկը կիրառելիս նկատել եք*»	Ստուգիչ հարց «*Դպրոցում գրասալիկի օգտագործման դեպքում փոխվե՞լ է արդյոք Ձեր երեխայի վերաբերմունքը ուսման նկատմամբ*»			Ընդամենը
	Այո, նկատել եմ ոգևորվածություն	Նա միշտ էլ ոգևորված է եղել դասերով	Երբեմն նկատում եմ	
Տեխնիկական խնդիրներ	118	287	185	**590**
Երեխայի դժվարությունը	51	79	63	**193**
Երեխայի կողմից տնային առաջադրանքների ավելի արագ կատարում	152	187	66	**405**
Ընդամենը	**321**	**553**	**314**	**1188**

Աղյուսակ 12-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ գրասալիկի կիրառման դեպքում տեխնիկական խնդիրներ նկատած 590 ծնողների 20.0%-ը երեխաների մոտ գրասալիկով աշխատելիս նկատել է ոգևորվածություն, իսկ 48.5%-ը նշել է, որ իր երեխան միշտ ոգևորված է դասերով:

Վերլուծության արդյունքներով այս երկու հարցերի պատասխանների միջև կապը թույլ է, այսինքն՝ պատասխանները չունեն տրամաբանական փոխկախվածություն: 553 ծնողներ (46.5%) նշելով, որ անկախ գրասալիկի

առկայությունից իրենց երեխան ոգևորված է դասերով, նրանց 33.8%-ը գտնում է, որ գրասալիկի օգնությամբ առաջադրանքները ավելի արագ են կատարվում: Եթե վերլուծվում են այս հարցերի պատասխանների կախվածությունը առանց «տեխնիկական խնդիրների» տողի, նկատվում է կապի աննշան ուժեղացում:

ԳՐԱՍԱԼԻԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԾՆՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Դպրոցում գրասալիկի կիրառության վերաբերյալ ծնողի վերաբերմունքը պարզելու նպատակով ընտրվել են նպատակային և ստուգիչ հարցեր (Աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Գրասալիկի կիրառության վերաբերյալ ծնողի ամփոփ վերաբերմունքի գնահատման հարցերի դասակարգումը

Նպատակային հարց	*Ստուգիչ հարցեր*
Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը. • **Կարծում եմ՝ այո:** • **Կարծում եմ՝ դեռ շուտ էր:** • **Պետք էր ավելի շուտ կիրառել:**	Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին. • Այո: • Ոչ: • Մասամբ:
	Դուք գիտե՞ք՝ ի՛նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը • Այո, ինձ բացատրել է ուսուցիչը: • Այո, ինձ դրա մասին ասել է իմ երեխան: • Ենթադրում եմ: • Չգիտեմ:
	Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում. • Գրեթե ամեն օր: • Շաբաթը երկու անգամ: • Երբ անհրաժեշտ է:

Որպես գրասալիկի կիրառության վերաբերյալ ծնողի ամփոփ վերաբերմունք, կարելի է ընդունել «Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դրոցից գրասալիկների կիրառումը» հարցը:

Արդյունքները ցույց են տալիս, որ տարրական դասարաններում գրասալիկի կիրառությունը շուտ համարող ծնողների տեսակարար կշիռը (53.0%) գերազանցում է ճիշտ համարող ծնողների մասնաբաժնից (43.4%) (Գծապատկեր 12):



Գծապատկեր 12. «Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը» հարցի պատասխանների բաշխումը, %

Ստուգիչ հարց 1. Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին.

- Այո:
- Ոչ:
- Մասամբ:

Աղյուսակ 14. «Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը» և «Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին» հարցերի պատասխանների համադրումները

Նպատակային հարց	Ստուգիչ հարց Ձեր կարծիքով՝ ՏՀՏ-ների կիրառությունը նպաստում է Ձեր երեխայի ուսումնական առաջընթացին.			Ընդամենը
Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը	Այո	Ոչ	Մասամբ	
Կարծում եմ՝ այո	319	30	166	**515**
Կարծում եմ՝ դեռ շուտ էր	147	189	294	**630**
Պետք էր ավելի շուտ կիրառել	22	9	12	**43**
Ընդամենը	**488**	**228**	**472**	**1188**

Աղյուսակ 14-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ տարրական դպրոցում գրասալիկի կիրառությունը ճիշտ համարող 515 ծնողների 61.2%-ը գտնում է, որ գրասալիկով աշխատանքը նպաստում է երեխայի ուսումնական առաջընթացին, իսկ 32.3%-ը գտնում է՝ մասամբ է նպաստում առաջընթացին: Գրասալիկի կիրառությունը տարրական դպրոցում դեռ շուտ համարող 630 ծնողների 46.7%-ը գտնում է, որ գրասալիկի կիրառությունը մասամբ է նպաստում ուսումնական առաջընթացին, իսկ 30.0%-ը չի գտնում, որ գրասալիկի կիրառությունը նպաստում է ուսումնական առաջընթացին:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ այս պատասխանների միջև կապը միջին է: Սա նշանակում է՝ տրված երկու հարցերի դեպքում ծնողների դիրքորոշումները ավելի հստակ են: Գրասալիկի կիրառությունը ճիշտ համարող ծնողների հիմնական մասը գտնում է, որ գրասալիկի կիրառությունը նպաստում է ուսումնական առաջընթացին:

Եզրակացություն 1: Ծնողների մեծ մասը կարծում է, որ գրասալիկի կիրառությունը շուտ էր, և որ գրասալիկի կիրառությունը մասամբ է նպաստում երեխաների ուսումնական առաջընթացին:

Ստուգիչ հարց 2. *Դուք գիտե՞ք՝ ի՞նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը.*

- Այո, ինձ բացատրել է ուսուցիչը:
- Այո, ինձ դրա մասին ասել է իմ երեխան:
- Ենթադրում եմ:
- Չգիտեմ:

Աղյուսակ 15. «Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը» և «Դուք գիտե՞ք՝ ի՞նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը» հարցերի պատասխանների համադրումները

Նպատակային հարց	Ստուգիչ հարց «Դուք գիտե՞ք՝ ի՞նչ նպատակով է դպրոցում կիրառվում գրասալիկը				Ընդամենը
Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը	Այո, ինձ բացատրել է ուսուցիչը	Այո, ինձ դրա մասին ասել է իմ երեխան	Ենթադրում եմ	Չգիտեմ	

Կարծում եմ՝ այո	431	43	32	9	**515**
Կարծում եմ՝ դեռ շուտ էր	468	47	64	51	**630**
Պետք էր ավելի շուտ կիրառել	32	5	3	3	**43**
Ընդամենը	**931**	**95**	**99**	**63**	**1188**

Աղյուսակ 15-ում ներկայացված տվյալներից երևում է, որ դպրոցում գրասալիկի կիրառությունը ճշիտ համարող 515 ծնողների հիմնական մասը՝ 83.6%-ը, գիտի գրասալիկի կիրառության նպատակը և դրա մասին տեղեկացել է ուսուցչից: Գրասալիկի կիրառությունը դեռ շուտ համարող 630 ծնողների 74.1%-ը նույնպես գիտի գրասալիկի կիրառության նպատասկը և դրա մասին տեղեկացել է ուսուցչից:

Վերը շարադրվածից երևում է, որ հարցերի պատասխանների միջև կապը թույլ է, բացակայում է տրամաբանական կախվածությունը: Տրամաբանական է, երբ գրասալիկի կիրառությունը ճիշտ համարող ծնողների մեծամասնությունը գիտի գրասալիկի կիրառման նպատակը և տեղեկացվել է ուսուցչից, սակայն գրասալիկի կիրառությունը դեռ շուտ համարող ծնողները, որոնք թվով գերազանցում են ճիշտ համարողներից, նույնպես գիտեն գրասալիկի կիրառության նպատակը և տեղեկացվել են ուսուցչից:

Եզրակացություն 2: Նկատելի են միմյանց հակասող եզրահանգումներ:

Ստուգիր հարց 3. Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում.

- Գրեթե ամեն օր:
- Շաբաթը երկու անգամ:
- Երբ անհրաժեշտ է:

Աղյուսակ 16. «Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը» և «Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում» հարցերի պատասխանների համադրումները

Նպատակային հարց	Ստուգիչ հարց «Որքա՞ն հաճախ է Ձեր երեխան գրասալիկով դպրոց գնում»			Ընդամենը
«Արդյոք ճի՞շտ եք համարում տարրական դպրոցից գրասալիկների կիրառումը»	Գրեթե ամեն օր	Շաբաթը երկու անգամ	Երբ անհրաժեշտ է	
Կարծում եմ՝ այո	109	108	298	**515**

Կարծում եմ՝ դեռ շուտ էր	86	121	423	**630**
Պետք էր ավելի շուտ կիրառել	6	6	31	**43**
Ընդամենը	**201**	**235**	**752**	**1188**

Աղյուսակ 16-ում ներկայացված տվյալներից երևում է, որ գրասալիկի կիրառությունը ճիշտ համարող 515 ծնողների 57.8%-ը նշում է, որ երեխան գրասալիկը դպրոց է տանում անհրաժեշտության դեպքում, իսկ 20.9-ական %-ը նշում է, որ երեխան գրեթե ամեն օր կամ շաբաթը երկու անգամ գրասալիկը տանում է դպրոց: Գրասալիկի կիրառությունը դեռ շուտ համարող 630 ծնողների 67.1%-ը նշել է, որ երեխան գրասալիկը դպրոց է տանում անհրաժեշտության դեպքում:

Այս պատասխանների համադրման արդյունքում պարզվեց, որ դրանց միջև կապը ուժեղ է: Ծնողների նշած պատասխանների միջև նկատելի է օրինաչափություն:

Եզրակացություն 3: Ծնողների հիմնական մասը այն համոզմունքին է, որ տարրական դպրոցում գրասալիկի կիրառությունը դեռ շուտ է, և այդ դիրքորոշումն են փաստում նաև ստուգիչ հարցերի պատասխանների արդյունքների բաշխումը: